



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, (37494) 40 46 24, ֆաքս: (37410) 581102,
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

25.05.2015թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետ

Սարգիս Սահակյանին

«Հետք» թերթի լրագրող

Գրիշա Բալասանյանից

Հեռ. 093-82-26-80

Հարգելի՛ պարոն **Սահակյան**,

«Հետքը» հոդված է պատրաստում մարզերի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների վերաբերյալ: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար ՀՀ կառավարությունը 2014թ. որքա՞ն գումար է հատկացրել Ձեր մարզին:
2. Նշված ծրագրի ու հատկացված գումարի շրջանակում ի՞նչ աշխատանքներ են կատարվել, ո՞ր համայնքներում (նշել համայնքը, որտեղ կատարվել են աշխատանքները, գումարի չափը և կապալառու կազմակերպության անվանումը):
3. Ի՞նչ եղանակով է ընտրվել կապալառու կազմակերպությունը:
4. 2014թ. նախատեսված ծրագրերն ավարտվե՞լ են:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գրիշա Բալասանյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 38 35

0201 ր. Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 38 35

0201 с. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 38 35 e-mail aragatsotn@mta.gov.am

N _____

**„Հետաքննող լրագրողներ,, հասարակական կազմակերպություն,
„Հետք,, թերթի լրագրող Գրիշա Բալասանյանին**

Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների լուծման ուղղությամբ Ձեր՝ 25.05.2015թ.. հարցմանն ի պատասխան տեղեկացնում ենք, որ մեր տնօրինության տակ գտնվող տեղեկատվությունը տեղադրված է մարզպետարանի aragatsotn.gov.am կայքում, որը կարող եք գտնել կայքի **Մարզպետարան** բաժնի **Համագործակցություն պետական, միջազգային, հասարակական կազմակերպությունների** հետ ենթաբաժնում, **Ծրագրեր եւ գերակա խնդիրներ** բաժնի **Մարզի զարգացման ծրագիր, Առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրներին ուղղված ծրագրեր, Զարգացման ծրագրեր** ենթաբաժիններում, **Մարզի սոցիալ-փնտեսական իրավիճակը** բաժնում, **Գնումների գործընթաց** բաժնում, ինչպես նաեւ **Կառուցման եւ շինվերանորոգման պայմանագրեր** բաժնում:

ՀՀ ՔԾ 1-ին դասի
պետական խորհրդական

Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ